ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

21/01/2020

Քաղաք Երևան, հունվարի քսանմեկ, երկու հազար քսան թվական

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարությունում 2020 թվականի հունվարի 21-ին անցկացվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում՝ ՀՀ արդադարադատության նախարարի՝ 2020 թվականի հունվարի 9-ի թիվ 3-Ա հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների մասնակցությամբ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Սրբուհի Գալյան	Արդարադատության նախարարի տեղակալ, (Հանձնաժողովի նախագահ)

Լուսինե Մարտիրոսյան	Արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ-մամուլի քարտուղար
Արփինե Սարգսյան	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Եփրեմ Կարապետյան	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ
Մարիամ Գալստյան	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ (Հանձնաժողովի քարտուղար)

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

1. Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հայտ ներկայացրած կազմակերպության վերաբերյալ տվյալները:

2. Հանձնաժողովի նախագահն արձանագրեց, որ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հայտ է ներկայացրել միայն «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամը:

3. Հաշվի առնելով, որ «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամը չի համապատասխանում ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշման հավելված 2-ի 7-րդ կետի պահանջներին, քանի որ չի հանդիսանում հասարակական կազմակերպություն՝ Հանձնաժողովը միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

1. «Կորպորատիվ Կառավարման Կենտրոն» հիմնադրամի ներկայացրած հայտին ընթացք չտալ:
2. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացված մրցույթի արդյունքները զեկուցել ՀՀ արդարադատության նախարարին՝ ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով:

Արձանագրությունը բաղկացած է 3 էջից:

Նիստը նախագահող,

Հանձնաժողովի նախագահ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՓՐԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ